## Վարդաքար

Վարչական ղեկավար՝ Գալուստ Ավետիսյան
Հեռ: 094 60 80 94
Մակերես՝ 9,7կմ²
Բնակչություն՝ 700
Ինդեքս՝ 3019
gavetisyan1974@mail.ru

Վարդաքարը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքից 7 կմ հյուսիս-արևմուտք, մարզկենտրոն Գյումրիից՝ 15 կմ հարավ-արևելք, Մանթաշ գետի աջ ափին: Նախկինում ունեցել է Թոմարդաշ, Թոմարտաշ, Վարդակար, Տոմարտաշ անվանումները:

Վարդաքար է վերանվանվել 1946 թվականին: Վարդաքարը տեղադրված է Մանթաշ գետի հովտում, Շիրակի դաշտում՝ ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Վարդաքարի մոտ Մանթաշ գետի վրա կառուցված է Վարդաքարի ջրամբարը:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-29թթ տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Մուշի շրջանից և Կարսի մարզից: Վարդաքարը զբաղեցնում է ՀՀ Շիրակի մարզի տարածքի հարավ-արևմտյան մասը:

Տարածքը կազմում է 945,3 քկմ: Վարդաքարում գերակշռում են տափաստանային լանդշաֆտների լեռնային տարբերակները: Կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և արտահայտվում են բարեխառն՝ երկարատև տաք ամառներով ու ցուրտ ձմեռներով: Կլիման, թեև ընդհանուր առմամբ բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բաձրության դառնում է ավելի խիստ:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի և ծխախոտի մշակությամբ: Շրջակայքում կան գյուղատեղի, «Սրբի դաշտ» մատուռ, խաչարձան, 19-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցի, բրոնզե դարին վերաբերող զանազան հնություններ: